

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց համագործակցող մեկ:

Օտարապաշտպանը գինում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաջօրե 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից)

Հայտարարությունը ընդունվում է ամեն լիզուով:

Հայտարարությունները համար գնորդում են
խրատարները րոտին 2 կոպեկ:

Մ Շ Ա Կ

լրագրին կարելի է գրվել

Կ Ե Ս Տ Ա Ր Ո Վ

Այսինքն յուրիս 1-ից ներկայ 1881 թվի, մինչև յուրիս 1-ը 1882 թվի:

Բաժանորդութեան գինը 6 րուբլ է: Կրկնու համար պէտք է ուղղակի գրվել խմբագրութեանը հետևեալ հասցեով. Тифлис, редакция «Мелк»:

ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

Մեր թղթակիցներն են: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Միացեալ ընկերութիւն: Թիբլիս: ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ: Միացեալ ընկերութիւն: Թիբլիս: ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ: Միացեալ ընկերութիւն: Թիբլիս: ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ: Միացեալ ընկերութիւն: Թիբլիս:

ՄԵՐ ԹՂԹԱԿԻԿՆԵՐԻՆ

Մեր գաւառական թղթակիցներէն շատերը անդադար գտնուած են, որ նրանց ուղարկած թղթակցութիւնները մեծ մասը չեն տպւում «Մշակի» մէջ:

Կան ի հարկէ և այնպիսի թղթակցութիւններ, որոնք չեն տպւում մեզանից անկախ պատճառներով, բայց թղթակցութիւնները մեծ մասը այն աստիճան միակողմանի են, որ մենք ինքներս ստիպուած ենք չը գետնել նրանց մեր լրագրի էջերում:

Գաւառացի հայը երբ գրում է մի նամակ, մի թղթակցութիւն, փոխանակ լոկ փաստեր, իրողութիւններ հաղորդելու, ըստ սովոր է երկար ու բարակ գատողութիւններ տնել մի որ և է չափից դուրս մասնաւոր երեւոյթի վրա, որ կարող է հետաքրքրել միմիայն իր քաղաքի, կամ գիւղի նեղ շրջանը: Այդ տեսակ նամակներ ստացվում են Անդրկովկասի և Կովկասի ամեն ծայրերից այնպիսի քանակութեամբ, որ հնար չը կայ գետնել նրանց մինչև անգամ մի ամենօրեայ թերթի մէջ: Հարկաւոր կը լինէին բազմաթիւ գաւառական թերթեր այդ բոլոր թղթակցութիւնները տպելու համար:

Պատահում է որ գաւառական թղթակցութիւնը ջանում է գատողութիւններ առնել ընդհանուր, ազգային հարցերի մասին, որ իսկապէս նոյն իսկ խմբագրութեան, խմբագրի գործն է՝ հաւաքած իրողութիւններից առաջնորդող յօդուածներ գրել:

Բայց շատ քիչ է պատահում որ գաւառական հայ թղթակցը հաղորդէր փաստեր, իրողութիւններ իր նամակների մէջ, տար խմբագրութեանը առատ և ճիշդ նիւթ ընդհանուր առաջնորդող յօդուածների համար:

Այնպիսի նիւթաւոր նամակներ, ինչպէս, օրինակ, Բագուից գրած նամակը այնտեղի բանտարանների դրութեան վրա, կամ Նրեանից գրած թղթակցութիւնը երեանեան նահանգի կալուածական խնդրի վրա, — պատկանում են ոչ թէ մեր մշտական, այլ պատահական թղթակցներին: Եւ այդ պատահական նամակները առատ նիւթ են

տալիս առաջնորդող յօդուածների համար: Հայը առհասարակ գիտող չէ, նա չէ տեսնում, չէ նկատում ինչ որ կատարվում է իր շուրս կողմ: Հայը աւելի սիրում է ֆրազա, ընդհանուր գատողութիւն, փոխափայտութիւն: Նրան դժուար է գիտել, ուսումնասիրել, պատկերացնել իր շուրս կողմ եղած հասարակական երեւոյթները: Հասարակական, ազգագրական, տնտեսական երեւոյթները չեն հետաքրքրում հային: Մեր թղթակիցները մեծ մասամբ գրում են զբոսայրների մասին, բայց այդ խնդրի մէջ էլ նրանք քննում են վարժագետի, տեսչի, հոգաբարձուների լաւութիւնը կամ վատութիւնը, պատմում են նրանց փոխադարձ կռիւները, յայտնում են որ զարոյցի փոփոխութիւն է, կամ ապահով չեն գտնում նրա արկի մէջ, նկարագրում են ինչպէս է անցել այս կամ այն դպրոցի տարեկան հարցաքննութիւնը: Բայց թէ ի՞նչ յարաբերութիւն, ինչ կապ ունի դպրոցը հասարակութեան հետ, ինչ մանկավարժական ուղղութեան է հետևում, ի՞նչ կրթիչ ներդրութիւն ունի շրջապատող ժողովրդի վրա, արդեօք դպրոցի մէջ մանուկներից ստացված ուսումը յարմար է, համապատասխան է նրանց ամենօրեայ, կենսական պէտքերին, երբ ուսումնարանի նստարանները թողած, նրանք կեանքի մէջ են մշտնում և այլն, — այդ բոլորը չէ հետաքրքրում մեր հայ թղթակիցներին:

Հայը շատ սիրում է պոլեմիկա, գրական բանակռիւ: Եւ այդ բանակռիւ մէջ շատ հազիւ է պատահում տեսնել հարցը պարզող իրողութիւններ և գատողութիւններ, այլ մեծ մասամբ բանակռիւ առարկան լինում է անձնական հաշիւը, անձնաւորութեան նկարագրի, կոշտ ու կոպիտ յարձակումները անձի վրա:

Իսկ ամեն ազգի մէջ պիտու է համարվող խնդիրը, տնտեսական խնդիրը, մինչև այժմ, բացի պատահական համակներէ, մեր գաւառական թղթակցութիւնների առարկայ եղած չէ երբեք: Գուցէ գիտելու համար տնտեսական երեւոյթները հարկաւոր էր անտեսագիտական կրթութիւն — իսկ դա, ճշմարիտ է, կատարելապէս պակաս է մեր ժողովրդին:

Վերջացնելով մեր խօսքը դարձեալ խնդրում ենք մեր գաւառական թղթակիցներէ, աւելի աշխատել հաղորդել միմիայն լուրեր, փաստեր, իրողութիւններ: Որքան առատ կը լինեն այդ տեսակ հաղորդութիւնները, առանց երկար ու բարակ գատողութիւնների, — այնքան աւելի շնորհակալ կը լինենք մեր թղթակիցներին:

Ամեն անգամ որ «Մշակի» մէջ մի նամակ էր երևում, որ համապատասխանում էր եւրոպական մտքով լրագրական թղթակցութեան գաղափարին, մենք գիտեմք մանաւանդ չէինք անում այդ տեսակ թղթակցութեան վրա: Բայց դարձեալ հետևողներ քիչ են լինում:

Գ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԱՅԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Երէկ Միացեալ Ընկերութեանց Կեդրոնական ժողովոյ ծէ նիստը տեղի ունեցաւ Վալաթիոյ Կեդրոնական վարժարանին մէջ, ի ներկայութեան 30-ի չափ երեսփոխանաց: Ատենը բացուեցաւ ժամ 7-ին, առժամայ նախագահութեամբ Տաթ. Փէշտիմալճեան էֆէնդի: Ատենագրութեան ընթերցումէն ու վաւերացումէն յետոյ, վարչութեան առաջնապետ Միսա Զերադ էֆ. խօսք առնելով՝ Կեդրոնական ժողովոյ ներկայացուց նախագահութեանը մ'ըրաւ, զոր կը հրատարակեմք ի ստորեւ: Կիւանական թղթակցութեան ընթերցումէն յետոյ, ժողովը ըզբողեցաւ վարչութեան մի ընդարձակ տեղեկագրով: Վարչութիւնը կը յայտարարէր թէ իւր բոլոր գործերը, հաշիւներն և թղթակցութիւնները բաց են և բաց պիտի մնան իւրաքանչիւր երեսփոխանի համար, և թէ ինք չը պիտի մասնակցի այն ամեն քուէարկութեան որ տեղի ունենայ իւր գործառնութեան նկատմամբ, որպէս զի իւր 7 քուէից կշռովը չը խափանէ ժողովին կամաց ազատ արտայայտութիւնը, քանի որ Միացեալ Ընկերութեանց Կեդրոնական ժողովն մէջ 13 քուէ բաւական են որոշում տալու համար: Տեղեկագրին այնուհետեւ Կեդրոնական ժողովոյ վաւերացմանը կենթարկէր վարչութեան որոշումները 14 կարեւոր խնդրոց նկատմամբ: Սոցա վրայ վիճարանութիւն բացուելով, վարչութեան անդամոց տուած բացատրութեանց վրայ՝ 9 խնդիրը ընդունեցան միաձայն հաւանութեամբ, և օրը տարածմամբ լինելուն համար միւս 5 խնդրոց քննութիւնն յետաձգուեցաւ յաջորդ նստին, որ պիտի գումարի երկու շաբաթէն: Ատենը փակուեցաւ ժամ 11 1/2-ին:

Աւստի Պ. Միսա Զերադի տեսնաբանութեան պատճէնը:

Պարոններ, Պատիւ ունիմ ներկայացունել ձեզ վեց նորընտիր պաշտօնակիցներս, որովք կազմուեցաւ ձեր վարչական մարմին: Որպէս կը տեսնէք, պէտք չունեցայ առնուլ ոչ — երեսփոխան աջակիցներ, զի Միացեալ Ընկերութեանց Կեդր. ժողովն ունի իւր մէջ ամեն հարկաւոր տարր ամեն ճիշդի համար: Պ. Յովհաննէս Արշակունի ստանձնեց առնապարտութիւնն, Պ. Ռէթէնս Պէրպէրեան ուսումնապետութիւնն, Պ. Գեորգ Թօփալեան դանձապետութիւնն, Պ. Միսաք Մանուկեան հաստիքապետութիւնն, Պ. Յովհաննէս Կիւլպէնկեան ծախսապետութիւնն և Պ. Յովհաննէս Շնորհքեան հաշուապետութիւնն: Վարչութիւնն սկսած է գործել, որպէս պիտի յայտնէ այժմ իւր առաջին տեղեկագիրը. այլ նա պէտք ունի ձեր համակիր աջակցութեան, զի ձեռքած է 7 անհատներ, մինչ դուք կը բաղկանաք 65 անձերէ: Կը ներէ՞ք մեզ յարկ թէ, որպէս զի չը խզուի այդ գործակցութիւնը, հարկ է որ հաշտութեան ծիածանն բարձրանայ Կեդր. ժողովին վրայ, որպէս ծագելու

յու ճիւղին ժողովին մէջ: Գաղափարի տարբերութիւնը բնական են ամեն ահուճի համար: Ոյր նշանաբանն չէ կրօնական հնազանդութիւն. կուսակցութիւնը կրնան արդար լինիլ հաւատարմապէս, զի ճշմարտութիւնն կրնայ նկատուիլ զանազան տեսակներէ, որպէս Արարատ որ ունի տարբեր երեւոյթ հիւսիսէն և տարբեր հարաւէն. սակայն երբ միան կը նրբանայ մինչև բժականութիւն, պէտք է որ սիրտն վեհ մնայ միշտ: Գուք ունիք այս մեծանշանութիւն, զի կը ներկայացունէք երիտասարդութիւնն, հասակ ուր հոգին բաց է ամեն գեղեցիկ զգացման առջև: Մեք, որ միացեալ եմք ոչ լոկ անունով, կրկնապատկեմք մեր ճիշդ որպէս զի մեր սուրբ ձեռնարկ վերականգնի բարոյապէս և նիւթապէս: Գիտեմ թէ ժամանակն է աննպաստ և թէ կան ամենուրեք թերահաւատներ մեր գործի նկատմամբ. այլ հարկ է որ դա աւելի վատ է մեր անձնութիւնը: Նոցա, որք կը հաշակեն թէ մեր կրթական նպատակ անօգուտ և մինչև իսկ ֆլաթափոր է ազգին, կը պատասխանեմք անխուփ. «Կրթութիւնն ոչ նուազ անհրաժեշտ է գործաւորին համար, մշակին համար, արհեստաւորին համար, վաճառականին համար»: Ի՞նչ է մեր նպատակ. — Նկատուելով տեղական պէտքերն, պատրաստել մի սերունդ որ լինի առողջ, առաքելի և հմուտ: Նա որ ունի, կորով, բարոյական և գիտութիւն, կրնայ հասնիլ գիւրակեցութեան: Ահա մի յայտագիր ում կը համակրի մեր ազգ, որպէս մեք կը համակրեմք Արուեստասիրաց Ընկերութեան: Նոյն նպատակին համար մեզ հետ կաշխատակցին աստ թիպանի և Ասիական Ընկերութեանց մեր ընտիր եղբայրներ և մինչև իսկ Ազգանուէր, Կրթատէր և Պարզասէր Ընկերութեանց մեր աղնիւ քոյրեր: Այսքան անձնութիւններ, որք փառքով կը ծածկեն Կոստանդնուպոլսի Հայերն և Հայուհիներն, չը պիտի մնան անպտուղ: Միացեալ Ընկերութիւնը, իրր գըլուս այս շարժման, ունին մեծագոյն պատասխանատուութիւնն: Ուրեմն բազմապատկեմք մեր զոհողութիւնը, և մեր խիղճ պիտի լինի գուարթ: Ազգասիրութիւնն, որ մի շնորհ կը նկատուէր ցարդ, մի պարտք է այսուհետեւ: Ունենա՞մք այս համոզում, և մեր ակումբ, որ նոր բոլորեց առաջին տարին, պիտի ողջունէ երկար տարիներ:

(Մատիս)

ԹԻՒՐԿԻԱ

Ալբանիները Բ. Կրան ամենաանհաշտ թշնամիներ են դարձել այն ժամանակից, ինչ թիւրքաց կառավարութիւնը աքսորեց նրանց գերի ընկած առաջնորդներին: Մի և նոյն ժամանակ ալբանիները չեն կամենում հպատակիլ Բուխարեստին և այդ պատճառով այժմ նրանց գլխաւոր նպատակն է ընդդիմադրել Բուխարեստին: Ինչ կը վերաբերի Թուրքիային, զիջած երկիրներն յոյն բնակիչներին, նրանք անտարբերութեամբ են վերաբերվում իրանց փնտրի

փոփոխութեանը: Նրանցից շատերը մինչև անգամ յայտնում են, որ իրանք զերազա- սում են մնալ Թուրքիայի հպատակ, որովհետև Յուսուֆը շատ տուրքեր կը պահանջի և զինուորներ կը հաւաքի:

Եւրոպայի մէջ յայտնված համակրու- թիւնը Միտհազ-փաշայի վիճակին վատ տպաւորութիւն գործեց Կ. Պօլսի մէջ: Պալատականները, վախճանով Եւրոպայի միջամտութեանը յօգուտ Միտհազ-փաշայի, շտապեցնում են սուլթանին, որ նա հաս- տատի գաղտնիքը: Եւրոպական շրջաննե- րի մէջ երկիւղ են կրում, որ սուլթանը կը հետեւի այդ խորհուրդներին և դատաւի- ուր գաղտնի կը կատարվի: Մահմադ Կա- ժի մասին կը յայտնեն այն ժամանակ, երբ նա կատարված կը լինի:

Այլ աղբիւրներից հաղորդում են, որ Միտհազ-փաշա հրաժարվում է քարտան- քից: Նա աւելի լաւ է համարում մեռնել ամբողջ աշխարհի առաջ և անիրաւութեան զոհ համարվել, քան թէ ապրել մի հեռա- լոր երկրի մէջ, որտեղ նա անյայտ կը մնայ և նրա մահը անկատարի կանցնի: Պալա- տից լուրեր են տարածում, իբր թէ դա- տապարտածները մի դաւադրութիւն էին կազմել սուլթանի ամբողջ ազգը ոչնչացնե- լու նպատակով:

Մահմադ-Կամադ և Նուրի-Կամադ փա- շաների կին սուլթանի քոյրերը մի նամա- կով յայտնել են իրանց կողմը, որ նրանք իրանց երկխոսութեամբ կը մեռնեն այն իսկ օրը, երբ նրանց ամուսինները կենթարկվեն մահուան պատժի:

ԲՈՒԿԱՐԻՍ

Սօֆիայից լրագրողներն հաղորդում են, որ պատերազմական միջոցով գնեցող Ելն- րօտից անբաւական են ոչ թէ միայն ա- զատամիտները, այլ և կառավարութեան կուսակիցները: Միջոցառումները գործադրած արտաքին կարգի միջոցներից շատերը ըն- դունվեցան միայն գնեցող Ելնրօտի պա- հանքի համեմատ, բայց որովհետև իշխա- նին շրջապատող անձինքներից շատերը ան- բաւական էին այդ միջոցներից, ուրեմն հազիւ թէ Ելնրօտ կարողանայ այսուհետեւ վարել պատերազմական միջոցների պաշտո- նը, եթէ մինչև անգամ բոլորական տղ- զային մեծ ժողովը ընդունէ իշխան Ալէք- սանդրի պահանջները:

Բոլորացիները այն կարծիքն են, որ ոչինչ միջոցներ չէին հասցնի իշխանին իր նպատակին, եթէ Առաքելները չը յայտնէր, որ նա անհրաժեշտ է համարում իշխան Ալէքսանդրի մնալը Բոլորացիայի մէջ: Ռու- սաց դիպլոմատիական գործադատար խիտ- րօ մեծ ծառայութիւն արաւ իշխանին, իսկ «Правит. Вѣсти» լրագրի մէջ մայի- սի վերջին տպված կառավարչական հա- ղորդութիւնը օգնեց իշխանին: Ռուսները այդ հաղորդութիւնը անյայտ թարգման- վեցաւ բոլորական լեզուով և տպվեցաւ պաշտօնական լրագրի մէջ, շատ ընտրողներ զրանից զրգվեցան ձայն տալ յօգուտ իշ- խան Ալէքսանդրի առաջարկութիւններին:

Թէ որքան մեծ է ռուսաց ազդեցութիւնը Բոլորացիայի մէջ, կարելի է դատել հետեւ- լետի հանգամանքից. այն քաղաքների մէջ, որոնց այցելեց իշխան Ալէքսանդր, թէպէտ նրան պատգամաւորութիւններ էին ներկայա- նում իրանց համակրութիւնը յայտնելու համար, բայց նրանք դիմում էին ռուսաց գործակատարին և տեղեկութիւն էին խնդ- րում Ռուսաստանի իսկական դիտաւորու- թիւնների և ցանկութիւնների մասին: Իշ-

խան Ալէքսանդր վճռեց չայցելել այն գա- լաւները, որոնք թշնամաբար էին վերա- բերվում նրա պահանջներին: Այսպէս թէ այնպէս Բոլորացիայի այժմեան դրութիւնը չափազանց կրիտիկական է:

Ընթերցողներին յայտնի է «Միջազգային ընկերութեան» հաղորդած հեռագրից, որ բոլորական տղզային ժողովը ձայների նը- շանաւոր մեծամասնութեամբ ընդունեց իշ- խան Ալէքսանդրի պահանջները:

ԱՆԳՆԱԿ

Բրէզիլ յայտնեց համայնքների ժողովի սպիկերին, որ նա կը փորձի մոտել հա- մայնքների ժողովը երգում տալու համար, որովհետև, նրա կարծիքով, ոչ ոք իրա- լունք չունի արգելել ժողովի անդամներին, որ նրանք կատարեն իրանց պարտաւորու- ական պարտականութիւնները: Այնու ամե- նայնիւ Բրէզիլ վճռել է այդ գործը յե- տաձգել մինչև կալուածական օրինագծի քննութեան վերջնալը:

Պարսկ իրաւագական պատգամաւորների կողմից հեռագրով յայտնեց Միտհազ Նա- հանքների գլխաւոր քարտուղարին իրան- զական կուսակցութեան անբաւականու- թիւնը: Հարկի վրա հրացան տրձակելու առիթով: Իրաւագական գործիչները վճռո- զականապէս մերժում են այն լուրը, իբր թէ Գիտօ պատկանում է Ֆինիկների կու- սակցութեանը:

Իրաւագական կալուածական օրինագծի քննութիւնը համայնքների ժողովի մէջ ա- ջողութեամբ է կատարվում: Մինչև այժմ ընդունված յօդուածներից ամենանշանա- լորը Խոթիւրդ յօդուածն է, որովհետև նա ապահովում է երկրագործին նրա կա- լուածքը և նրա աշխատանքի պատուըները: Այդ յօդուածը ընդունվեցաւ ձայների ա- հագին մեծամասնութեամբ: Կարծում են, որ այսուհետեւ վիճարանութիւնները աւելի աջողութեամբ կանցնեն:

ԱՄԵՐԻԿԱ

Վաշինգտոնի դատաստանական իշխանու- թիւնը նիւթեր է պատրաստում Գիտօին դատելու համար: Մեղադրանքը ոչինչով չի գանազանվի սովորական յանցաւորների մե- ղադրանքից: Եթէ հանրապետութեան նա- խագահը կը մեռնի, Գիտօին կը դատեն իբրեւ մարդասպանի, իսկ եթէ նախագահը կենդանի կը մնայ, յանցաւորին այնպէս կը դատեն, ինչպէս մի մարդու, որ սպանու- թեան փորձ է արել: Այս վերջին դէպ- քում ամենամեծ պատիժը բանտի մէջ կա- լանաւորութիւնն է: Շատերը առաջարկում են փոխել այդ օրէնքը և մահուան պատ- ժի ենթարկել այն յանցաւորին, որ կը փորձի սպանել հանրապետութեան նախա- գահին: Վաշինգտոնից ստացված լուրերը հանգստացրել են ամերիկացիներին, որոնք յոյս ունեն, թէ Հարիլի կառողջանայ: Պետական պրօկուրօրը յայտնեց, որ դա- տաստանը չէ կարող կայանալ մինչև չը ո- թոյն յանցանքի հետեւնքը: Գիտօ հաղոր- դեց նրան իր յանցանքի մանրամասնութիւն- ները իր մտադրութեան ծագելու, բոլորից մինչև նրա կատարելը: Պրօկուրօրը այդ ցուցմունքը, որ իր ժամանակին կը հրա- տարակվի, կատարելապէս ճշմարիտ է հա- մարում: Յանցանքը սառնասրտութեամբ էր մտածված և յանցաւորը շատ լաւ հասկա- նում էր նրա հետեւանքը: Շատ տեղերից

պահանջում են, որ յանցաւորը խստու- թեամբ պատժվի:

ՖՐԱՆՍԻԱ

Անկարգութիւնները Տուրիսի մէջ հե- ղհեղեղ սաստկանում են: «Temps» լրագ- րի թղթակիցը այն կարծիքն է յայտնում, որ Ֆրանսիացիք պէտք է զրաւեն մի քանի նշանաւոր կէտեր մեծ զօրաբաժիններով, որպէս զի յանպատաստից յարձակման չեն- թարկվեն: Ֆրանսիացիների ամենափոքր անաջողութիւնը ամենավատ հետեւանքն էր կարող է ունենալ: Սֆալս ուղարկած Տու- ռիսի զինուորներին չէ կարելի հաւատալ, որովհետև նրանցից շատերը փախչում են և անցնում են թշնամու կողմը: Գերմանա- կան և սպանիական հիւպատոսները հեռա- նում են Տուրիսից և երեւի նրանք շուտ չեն վերադառնալ: Սայիդի մէջ եղած կո- տորածի զոհերի համար հաւաքված է մօտ 50,000 ֆրանկ: Գրեվի նուիրել է 5000 ֆրանկ, իսկ լրագրիների խմբագրու- թիւնները 250 ֆրանկ իւրաքանչիւրը:

Սպանիական կառավարութիւնը չափա- ղանց մեծ վարձատրութիւն է պահան- ջում Ալժիրայի մէջ սպանված սպանիացի- ների ընտանիքների համար: Ֆրանսիական կառավարութիւնը յիշեցրեց, որ կարխտ- ների պատերազմի ժամանակ սպանիական կառավարութիւնը հրաժարվեցաւ վարձատ- րել այն Ֆրանսիացիներին, որոնք մնացել էին ներքին պատերազմից:

Սուզոյից հեռագրում են, որ ապստամբ- ների առաջնորդ Լիբեն Սալերա միացաւ Սֆալսի ապստամբների հետ: Քաղաքը բազմաթիւ արարներ են գալիս, միանում են ապստամբների հետ և սպառում են Ֆրանսիական զօրքերի յարձակմանը:

Հիւսիսային Աֆրիկայի մէջ կատարվող անցքերը անհանգստացնում են Ֆրանսիա- ցիներին, իսկ Ֆրանսիական լրագրիների մէջ տպված յօդուածներից երեւում է, որ մամուլը այժմ հարցին աւելի ճիշդ տեսա- կէտից է նայում: Ֆրանսիական լրագրու- թիւնը չէ կամենում խոստովանել, որ Տու- ռիսի դէմ սկսած արշաւանքը մեծ անգոյ- շութիւն էր, բայց մի և նոյն ժամանակ մատնացոյց է լինում արաւբիներ գործերի միջոցով: Սխալների վրա:

Մամուլը մեղադրում է Բարեկեմի Անտ Նիլերին, որ նա յռնական դժուարութիւն- ների ժամանակ Թուրքիայի կողմը բռնեց, իսկ այդ վերջինը շուրջակալութեան փո- խարէն ապստամբեցնում է Ֆրանսիացիներ ի դէմ Ալժիրայի, Տուրիսի, Տրիպօլիի և Մարսիլի մահմեդականներին: Արաւբի- միւսները շուրջի: Խալիսան զրգացած է Ֆրանսիայի դէմ, որ ամբողջ Եւրոպայի մէջ այժմ առանձնացած է և թշնամացած լատինական պետութիւնների հետ: Այդ մեղադրանքները մասամբ իրաւացի են, բայց օտարօտի է այն իրողութիւնը, որ մամուլը խորհուրդ է տալիս Ֆրանսիական կառա- վարութեանը բարեկամաւ Գերմանիայի և Աւստրո-Սերպիայի հետ: Կրպիւնների յայտնած այսպիսի մտքերից երեւում է, որ գործերի դրութիւնը Ալժիրայի մէջ չափազանց վատ է:

Այս բոլորից երեւում է, որ Ֆրանսիական արտաքին քաղաքականութիւնը պէտք է արմատականապէս փոխել, մինչդեռ Բար- տիկի Անտ-Նիլը մնում է իր պաշտօնի մէջ, իսկ պատգամաւորների ժողովը չէ էլ մտածում նրան փոխել: Գրա պատճառն այն է, որ հանրապետութեան նախագահը չէ կամենում բաժանվել այն միջոցաւոր-

թիւնից, որ սենատի օգնութեամբ կարողա- ցաւ յաղթել Գամբետային: Մինչև պատ- զամաւորների ապագայ ընտրութիւնները չը վերջանան, այժմեան միջոցաւորները չեն թողնի իրանց պաշտօնները, եթէ մինչև անգամ այդ մարդիկներից կազմված կառա- վարութիւնը մեծ փնտնեք հասցնի Ֆրան- սիային:

ՆԱԼԻՍԱ ՊԱՐՍԻԱՍԱՆԻՑ

Թաւրեզ, 30 յունիս

Եթէ կայ աշխարհիս երեւոյն մի ազգ, որ դա- րերի հոսանքը չէ դուրս բերել անաւորութիւ- նից, մի ազգ, որ աւելի լաւ է համարում մնալ կատարեալ անկրթութեան մէջ, որ չունի ոչ մի ձգտում դէպի առաջադիմութիւն, — դա պարսից ազգն է: Այդ անաւորութիւնը չէ նշանակում միայն պարսիկների մէջ, այլ և Պարսկաստա- նում ապրող հայերի մէջ: Պարսկաստանի գլխաւոր հայաբնակ քաղաքը, որ փոքր ի շատէ լուսաւորված է, այդ Թաւրիզն է, որի մէջ ապ- րող զլուսաւորապէս գաղթական հայերը, ըստ մեծի մասին պարագում են վաճառականու- թեամբ, ունեն մի ուսումնարան, որ առաջինը պիտի համարել պարսկահայերի մէջ, նոյնպէս մի մասնաւոր դպրոց Լիւսաւայում, և մի ընթեր- ցարան:

Ուսումնարանի դրութեան նայելով, մեծ դա- նադանութիւն կարելի է գտնել ներկայ և ան- ցեալ տարիների մէջ: Մի քանի տարի առաջ ուսումնարանը ունէր մի խումբ աշակոյծ և գիտական ուսուցիչներ, ունէր բազմաթիւ հո- զարարձօք, որոնց շնորհիւ դպրոցը արագաբա- ղիմում էր դէպի առաջ: Իւրաքանչիւր տարվայ քննութեանը ներկայ էին լինում Թաւրի- ղի պարսից նշանաւոր ներկայացուցիչները, օտարազգի հիւպատոսները: Իսկ այս տարի շնորհիւ մի որ և ից Գաւապահանի, որը չու- տով հեռացաւ պատերից, ուսումնարանը կարե- լի էր համարել առանց հոգաբարձութեան, ու- նէր 2 ուսուցիչ, իսկ հարցաքննութիւն ամենին չէ լինելու: Հայի յետի խնկը գովել է: ասում է առաւել: Մեր մէջ մի գործողի մի անձնանկէր անհատի աշխատութիւնը այն ժա- մանակ միայն գիտեն գիտնաւոր, երբ նրան կը հալածեն, երբ նրան վերջապէս կը տուրպէս ձեռք վերցնել իր սկսածից, և ամեն տեսակ չարութիւն գործելուց յետոյ, նորից կը զգան որ մի մեծ բան կորցրել են... Տեղացիք հասկանալով այժմ իրանց սխալը, որ գոնէ են իրանց կամայականութեա- նը ուսումնարանի առաջադիմութիւնը, զրկվել անխնայ աշխատող մի քանի անհատներից, ա- րժք միտում են մտածել առաջիկայ տարուան համար կրկին նրանց հրաւիրել, որոնց հալածել էին: Այս տարուայ ընտրված հոգաբարձութիւնը կը յուսանք, որ բարեխղճաբար կը կատարէ իր պաշտօնը և չի հետել վերջին տարիների ան- կարգութիւններին: Պէտք է հրաւիրել հմուտ ու- սուցիչներին, որոնք յարմար գտնվելով իրենց ստանձնած պաշտօնին, բարեկարգեան այդ հիմնա- կութիւնը, որտեղ հարկաւոր մասնակցելու ա- ռանց մի հիմնաւոր ուսում ուսանալու, անց են կացնում իրենց ժամանակը: Պէտք է ի հակառի ունենալ և այն, որ այդ դպրոցը միակ հիմնա- կութիւնն է, որ եթէ ոչ ամբողջ պարսկահայերին գտնէ Առաքելականի հայ բնակիչներին պէտք է լայն և կրթութիւն մատակարարէ:

Ընթերցողների վիճակը նոյնպէս լաւ չէ: Ա- ռաջ ստացվում էին բաւական ամապիւրներ: Լա- ղիները, նոյնպէս և օտար լեզուներով, այն էլ իւ- տարի միայն 5 լրագիր է ստանում, այն էլ լի- րաքանչիւրից մի մի համար: Բայց է լինում շա- բաթը երկու թէ երեք օր, այն էլ մի քանի ժամ: Պարոն Համբարձում Առաքելները ամառը 7-ին երեկոցան իր տան մէջ, յօգուտ օրիորդական դպրոցի, կարգաց «Պարսկահայոց վերաբերու- թեամբ» մի դասախօսութիւն: Բայց տեղացիներն այնքան չէ հետաքրքրում իրանց վիճակի մասին, իրանց աղաղակիցների մասին տեղեկու- թիւն ստանալ: Այնպէս որ, չը նայելով դասա- խօսութեան նիւթը շատ հետաքրքրական էր, դարձեալ ներկայ կողմերի թիւը խիստ ասակա- էր, թէ և դասախօսը լաւ ընդունելութիւն գտաւ: Պարսկաստանի մէջ զիւղերի մեծ մասը զանա- ղան խաների և բեկերի իշխանութեան տակ է լինում: Արաքսից 2 օրվան ճանապարհ հեռի